պարհն է, Շահերանց Ծատուրի որդի Գրիգորս և Ղազարս ծախեցինք մեր Թալշի տափն վանքի վերայ։

Վլասանց Ծատուրիցն մէկ տափ առայ, վերի կողմն մեծ Շըհառն է։ Ամիրջանի հողերումն մէկ տափ առինք Տէր Յովհաննէսիցն, ներքի կողմն մեծ ձորնէ.

Դապաղ Ստեփանի գոտերքս տուաք մէկ տափ, որէ վանքի մեծ մարջումն։ Ես Աննաս տուի մօշի հողն, մէկ կողմն ճանապարհն է։

Սաղիանի վանքի շինելու թէ նորոգելու համար գրումէ 1637 թ. դեսպանութեամբ Շամախի պատահած (որ այժմեան Աղ-սուի տեղումն էր յայնժամ) պ. Ադամ Օլէարիուս քարտուղարն դեսպանութեան Հոլշտէյնի, նկարագրելով Ջրօրհնեաց հանդէսը, որ կատարել է վանքի ծերունի եպիսկոպոսն [1]) իւր՝ դեսպանի և Շամախւոյ խանի և բազմաթիւհայոց և Պարսից ներկայութեամբ, և ահա պ. Ադամի գրուածն, որ տպուած է «Արձագանք» շաբաթաթերթի մէջ 1888 յունվար համար 1. յեր. 14-15, և է հետևեալն։

«Ջրօրհնեաց հանդէսը Շամախում 1637 թուին»։

«Ամսոյս 6-ին պայծառ և գեղեցիկ եղանակով կատարուեցաւ Թիֆլիսում Ջրօրհնեաց հանդէսը։ Հայաբնակ քաղաքներում այդ հանդէսը գրեթէ միայնակն է տարուայ մէջ, որ ժողովում է տեղացի Հայ ժողովրդին ի միասին և հասարակութիւնը մի առանձին հոգեկան զուարճութիւն է պատճառում»։

«Մեր պատմութեան մէջ գտնվում են Ջրօրհնեաց հանդէսների քանի մի նկարագրութիւններ։ Այժմ աւելորդ չէ յառաջ բերել այստեղ Շամախի քաղաքում 1637 թ. կատարած հանդէսի նկարագրութիւնը, որ արած է Ադամ Օլէարիուսը»։

«Սա, իբրև Հոլշտէյնի դեսպանութեան քարտուղար, երեք անգամ (1633 – 1637, և 1639 թուականներին) յիշեալ դեսպանութեան հետ այցելած է Մոսկվը և Ռուսաստանով հասած պարկաս-

---

[1]) Գրուածոյս ուղղութիւնը տես յերես 28 առաջնորդաց ցանկի մէջ։